ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ֆաքս. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԱՊՐԻԼԻ 2018 թվականի N 20-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով Այրում համայնքի ավագանին,

Որոշում է.

1. Հաստատել Այրում համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը՝

ՕՐԱԿԱՐԳ

1) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-016-0220-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ <<ՎԵՌԼԻԱ ՋՈՒՐ>> ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՀՀ ԷԵԲՊՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՁՆԵԼՈՒ 21-Ա
2) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0177-0007-01 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,3000 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ 22-Ա
3) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0177-0007-01 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,5000 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ 23-Ա
4) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0114-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,17937 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ 24-Ա
5) ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ 25-Ա
6) 2018Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ Ի-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 26-Ա
7) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ-27-Ա
8) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ-28-Ն
9) ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 94-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 29-Ն

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	—	—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 21-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 11-016-0220-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԲԱԳՐԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆ <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՀՀ ԷԵԲՊՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՆՁՆԵԼՈՒ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> անդամների 19.03.2018 թ. N51 դրական եզրակացությունը՝ Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրերի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինական գործին, որով նախատեսվում է համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համայնքային սեփականություն հանդիսացող Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրի գյուղատնտեսական նշանակության 0.03434 հա /կադաստրային ծածկագիր 11-016-0220-0001/ այլ հողամասը փոխադրելու էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության /ՕԿՋ/, համայնքի ավագանին

Որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքային սեփականություն հանդիսացող Այրում համայնքի Բագրատաշեն բնակավայրի գյուղատնտեսական նշանակության 0.03434 հա /կադաստրային ծածկագիր 11-016-0220-0001/ այլ հողամասը փոխադրելու էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության /ՕԿՋ/ *և հարցի լուծման նպատակով սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության.*
2. Այրում համայնքի Բագրատեշեն գյուղի ջրամատակարարումն իրականացնել <<Վեոլիա Ջուր>> ընկերության միջոցով՝ մտնելով ընկերության կողմից սպասարկվող տարածք:
3. Այրում համայնքի Բագրատեշեն գյուղի 117,236,390 ՀՀ դրամ արժեքով 7130 գծմ. երկարությամբ ջրամատակարարման համակարգը և համայնքային սեփականություն հանդիսացող Այրում համայնք գյուղ Բագրատաշեն 9-րդ փողոց 10-րդ նրբանցք թիվ 13 հասցեում գտնվող ՕԿՋ-ն և նրա համար որպես սպասարկման տարածք նախատեսված 11-016-0220-0001 կադաստրային ծածկագրով 0.03434 հա մակերեսով հողամասը նվիրատվությամբ հանձնել Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի, որպեսզի վերջինս վարձակալությամբ հանձնի <<Վեոլիա Ջուր>> ընկերությանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ՋԱՔԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 22-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0177-0007-01 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,3000 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ 22-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է.

1. Տալ համաձայնություն Այրում համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-043-0177-0007-01 կադաստրային ծածկագրով 0.3000 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը, սահմանված կարգով մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար:

2.Մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար հողամասի տարեկան մեկնարկային վարձավճարը սահմանել՝ 3000 (երեք հազար) դրամ, քայլի չափը մեկնարկային վարձավճարի 5 %-ի չափով՝ 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ:

3. Վարձակալության ժամկետը սահմանել 25 տարի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱԱՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 Ապրիլի 2018 թվականի N 23-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0177-0007-01 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,5000 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է.

1. Տալ համաձայնություն Այրում համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-043-0177-0007-01 կադաստրային ծածկագրով 0.5000 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը սահմանված կարգով մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար:
2.Մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար հողամասի տարեկան մեկնարկային վարձավճարը սահմանել՝ 7000 (յոթ հազար) դրամ, քայլի չափը մեկնարկային վարձավճարի 5 %-ի չափով՝350 (երեք հարյուր հիսուն) դրամ:
3. Վարձակալության ժամկետը սահմանել 25 տարի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	—	—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Արովյան 1, Ň»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 24-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՂԹԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 11-043-0114-0032 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,17937 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշում է.

1. Տալ համաձայնություն Այրում համայնքի Հաղթանակ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-043-0114-0032 կադաստրային ծածկագրով 0.17937 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը սահմանված կարգով մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար:
2.Մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համար հողամասի տարեկան մեկնարկային վարձավճարը սահմանել՝ 3000 (երեք հազար) դրամ, քայլի չափը մեկնարկային վարձավճարի 5 %-ի չափով՝150 (մեկ հարյուր հիսուն) դրամ:
3. Վարձակալության ժամկետը սահմանել 25 տարի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (0)	Դեմ (8)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	—		—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Արովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 25-Ա

ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 21-րդ կետով, համայնքի ավագանին՝

Որոշում է

1. Տալ համաձայնություն Այրում համայնքի Արճիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող փողոց 13 թիվ 4 հասցեում գտնվող 11-015-0224-0057 կադաստրային ծածկագրով (նախկին ծածկագիր՝ 11-0224-0051) նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական և գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, 0,16081 հա հողակտորը աճուրդով վաճառելու համար:

2. Աճուրդով վաճառքի համար մեկ քառ.մ հողամասի մեկնարկային գինը սահմանել՝ 90 դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ		—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՄԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	—	—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱԱՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 26-Ա

2018Թ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ Ի-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով համայնքի ավագանին

Որոշեց

1. Հաստատել 2018թ. բյուջեի կատարման 1-ին եռամսյակի հաղորդումը ըստ հավելվածի.
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Չեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ	—	—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ	—	—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	—	—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»է. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 Ապրիլի 2018 թվականի N 27-Ա

ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի, 1-ին մասի, 30-րդ կետով և ՀՀ վարչապետի 2017 թվականի մայիսի 30-ի N01/29.6/[407365]-17 հանձնարարականի՝ համայնքի ավագանին՝

Որոշում է

1. Հաստատել Այրում համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԵՀՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ		—	—
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ		—	—
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		—	—
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱՍ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 36-րդ կետի պահանջով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը, պայմանները և իրականացման կարգը՝ ըստ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	Կողմ (8)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄՀԵՐԻԿ			
ԲԱՀԱԴՈՒՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ			
ՄԻՐԶՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԵԳԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ			
ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ			
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ			
ՀԱԽՎԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ			
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ			
ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՎԱԱՆ			
ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԱՐՏԱԿ			
ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԱՐԱՆՅԱՆ

Հավելված
Հաստատված է
Այրում համայնքի ավագանու
12.04.2018 թվականի 28-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով /այսուհետ՝ կարգ/ սահմանվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը՝ ծավալը պայմանները և իրականացման կարգը՝ Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները /այսուհետ՝ պարտադիր բարեկարգում/:

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Այրում համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է Այրում համայնքի վարչական տարածքում գտնվող՝
1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
3) այգիներում, հանգստի գոտիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
4) ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների և գազալցակայանների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5) բացօթյա շուկաների և տոնավաճառների /այսուհետ՝ օբյեկտներ/ սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու մասին,, N 596-Ն որոշման համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Այրումի համայնքապետարանի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան՝ համայնքի ղեկավարի համաձայնությունը ստանալուց հետո:

10. Այրումի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ

շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ անշարժ գույքի բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

11. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

12. Այրում համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և /կամ/ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

13. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն, այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը, համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

14. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման

տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

15. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր

բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

16. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների, առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առանձնատների համար՝ հողամասի պարագծից մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4)ավտոկանգառների, ավտոկայանատեղերի, բենզալցակայանների, գազալցակայանների, արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից 5-15 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

5) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

6) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 5-10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

7) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Ղազարյան

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 156-րդ հոդվածի 1-ին մասի, սույն կարգի պահանջները խախտելն առաջացնում է պատասխանատվություն տուգանքի ձևով սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով:

Կոչ ենք անում պահպանել նշված կարգի պահանջները, որի նպատակն է ունենալ կանաչապատ, մաքուր, լուսավոր և բարեկարգ համայնք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Տնտեսավարող սուբյեկտ	ստորագրություն	ամիս,ամսաթիվ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այրում համայնք,
4102 Աբովյան 1, Ն»é. 098 00-30-48, E-mail: ayrum.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 Ապրիլի 2018 թվականի N 29-Ն

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին

Ո ր ո շ ու մ է.

1. Այրում համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի՝Այրում համայնքի 2018թ-ի բյուջեն հաստատելու մասին՝թիվ 94-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

՝1. Հաստատել Այրում համայնքի 2018թ. բյուջեն

1) եկամուտների գծով 228969.8 հազար դրամ,

2) ծախսերի գծով 291279.6 հազար դրամ,

3) դեֆիցիտը (պակասուրդը) 62309.6 հազար դրամ,

2) որոշման 2-րդկետով հաստատված Հատված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 2018թ. համայնքի բյուջեի եկամտային մասի թիվ 1121 <<Գույքահարկ փոխադրամիջոցների համար>> տողում նախատեսված գումարը ավելացնել 1255.0 հազ. դրամով: Թիվ 1121 տողում գրված 28909.0 թվի փոխարեն կարդալ 30164.0 թիվը,

3) որոշման 3-րդ կետով հաստատված Հատված 2-ում, 4-րդ կետով հաստատված Հատված 3-ում և 7-րդ կետով հաստատված Հատված 6-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 2018թ. համայնքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4222 հոդվածում նախատեսել 400.0 հազ. դրամ:

բ. 2018թ. համայնքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածով նախատեսված գումարը պակասեցնել 2000.0 հազ. դրամով: Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5122 հոդվածում գրված 5609.8 թվի փոխարեն կարդալ 3609.8 թիվը,

գ. 2018թ. համայնքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5121 հոդվածով նախատեսված գումարը ավելացնել 2000.0 հազ. դրամով: Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 5121 հոդվածում գրված 12000.0 թվի փոխարեն կարդալ 14000.0 թիվը,

դ. 2018թ. համայնքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 6 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածով նախատեսված գումարը ավելացնել 855.0 հազ. դրամով: Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժնի 6 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածում գրված 1800.0 թվի փոխարեն կարդալ 2655.0 թիվը,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: